

25. 614

ԻՅՄԻՍ - ԶԻՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ԻՅՄԱՐՆ - ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՎԵՏԻՏՈՐԻ

Ա. ՄԵԼՆԱԼԿՍԵՒՍ

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹԹԱՆ
ԿՑԱՆՔՆ ՈՒ ՊԼԵԲԱՐԸ
Զ Ի Ն Ա Ս Տ Ա Ն Ո Ւ Մ

ՊԵՏԼՐՍՑ

1931

ՅԵՐԵՎԱՆ

27 .06. 2013

25.084

115 JAN 2010

ԿՈՄԱՆԱԴԵՄԻՏ.— ԶԻՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ—
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

333.301(51)

Ա. ՄԵԼՆԱԼԿՄԵՆԻՍ

Մ-53

48

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔՆ ՈՒ
ՊԱՅԲԱՐԸ ԶԻՆԱՍՏԱՆՈՒՄ

1008
8401
36606

Թարգմ. ԹՈՒՐՇԱՆ

ՊԵՏԶՐԱՏ

1981

ՅԵՐԵՎԱՆ

ՊԵՏՐՈՍԻ ՏՊԱՐԱՆ
ՓԼԱՎԼԻՏ 6953 (Բ)
ԻՐԱՏ. ՅԵ 1897
ՊԱՏՎԵՐ 5602
ՏՐԲԱԺ 4000

Չինաստանում ապրում և ավելի քան 400 միլիոն
մարդ: Դա կազմում և ամբողջ մարդկության մեկ քա-
ռորդը և 2½ անգամ ավելի յե մեր Միության բնակչու-
թյունից: Այդ 400 միլիոնից վոչ պակաս 350 միլիոնը
գյուղացիներ են:

Չինական գյուղացիները շատ խնամքով և մեծ
վարպետությամբ են մշակում իրենց հողերը: Միայն
ամենավատ հողերն են տարեկան մեկ անգամ բերք
տալիս: Սովորաբար նրանց հողերը յերկու, իսկ շատ
տեղերում ել յերեք անգամ են բերք տալիս: Դրան նը-
պաստում են յերկրի կլիմայական պայմանները:

ԹՎում և, թե այդպիսի յերկիրը կարող և աշխար-
հիս շտեմարանը լինել: ԹՎում և, թե այդպիսի յերկրի
ժողովրդի մոտ հացը շատ առատ պիտի լինի:

Սակայն ամենուրեք, բացի Խորհրդային Միություն-
նից, աշխարհը կառուցված և այնպես, վոր նրանք, վո-
րոնց աշխատանքով ստեղծվում և հարստություն, իրենք
տառապում են աղքատության և սովի ճիրաններում:

Չինաստանում աշխատավորության ապրած սովը,
աղքատությունը և ավերը քայքայել են յերկրի ամբողջ
ժողովրդական տնտեսությունը: Դրա հետ միասին աշ-
խատավորությունը դիտակցում և, վոր հեղափոխու-
թյունից բացի՝ ուրիշ միջոց չկա ազատվելու սովամահ
կործանումից: Ամբողջ աշխարհում են հեղափոխական
մարտիկների բախումները: Ահի՛ արդե՛ս արդարացի

Քե ինչպիսի խոշոր նշանակութիւն ունի 350 Թիւիոն չինական դյուղացիութեան հեղափոխութեանը, յերբ այդ հեղափոխութեան գլուխն է անցնում բանվոր դասակարգը, վորը վերջին տասը տարիներէ դաժան և արյունահեղ սպաջարում կրած ու կոտորած իր հերոսական կոմունիստական կուսակցութեանն ունի:

1. ԿԱՎՎԱԾՍՏԵՐՆ ՈՒ ԿԱՊԱԼԱՌՈՒՆ.
ՀՈՂԻ ԿԱՊԱԼԸ

Ձինաստանում մշակելի հողի կեսից ալելին դարձել են կարվածատերերը: Վոր գլխավորն է, նրանք դարձել են ամենալավ հողերը: Պարզ է, վոր կարվածատերն ինքն այդ հողերի վրա չի աշխատում: Նա այդ հողերը վաճարի կտորներով վարձակալով է տալիս դյուղացիներին.— հաճախ նույն այդ դյուղացիներին՝ վորոնցից խել ու գրավել է այդ հողամասերը: Ինքը կարվածատերը յերբեմն ապրում է քաղաքում, խսկ դյուղում ունի իր ծառաները, վորոնք դյուղացիներէից հալազում են վարձավճարը: Յերբեմն էլ նա րնակվում է դյուղում, վորտեղ նա բերդանման տուն ունի: Կարվածատերերի տները շրջապատված են բարձր քարե պարիսպներով, վորոնք դետեր ունեն: Նա ունի իր դինված պահակները, վորոնց ողնութեամբ ճնշում է անհնազանդ դյուղացիներին: Յերբեմն էլ նա սեփական բանտ է կառուցում այդ դյուղացիներէի համար:

Կարվածատիրոջ վարձակալով հող վերցնող դյուղացին նրան պիտի տա կամ բերքի մի մասը և կամ վճարի վորոշ գումար: Ավելի հաճախ կարվածատերը վարձավճարը վերցնում է հացահատիկով: Յեթե դյուղացին իր հողամասից հավաքեց 3000 կիլոգրամ բրինձ,

ապա որենքի համաձայն 1500 կիլոգրամը հանձնում է կարվածատիրոջը, վերջինս հողն ողտագործելու համար: Ինչ չեն այնպիսի դեպքեր, յերբ վարձակալը 3000 կիլոգրամ բրինձից 1800-ը կամ 2000-ը սալիս է կարվածատիրոջը:

Յերջանիկ է այն վարձակալը, վորն իր բերքի միայն կեսն է վճարում կարվածատիրոջը: Շատ հազվագյուտ դեպքերում միայն՝ կարվածատերը վարձակալից վարձավճարից բացի ուր, բան չի պահանջում: Սովորաբար դյուղացին վարձավճարը հանձնելիս, պետք է Հյուրասիրի կարվածատիրոջը: Յեթե հողը տարեկան յերկու անգամ է բերք տալիս, սպա վարձավճարը մուծվում է յերկու անգամ և դյուղացին էլ յերկու անգամ Հյուրասիրութեան է սարքում կարվածատիրոջ համար: Այս առթիվ վարձակալը պետք է հող տանի, վոր կարվածատերը դոճ մնա իր Հյուրասիրութեանից: Գյուղացու համար դա քայքայումն է: Բացի դրանից՝ նա տոներին նվերներ պետք է տանի կարվածատիրոջ—սազեր, ձուկ, բանջարեղեն. բացի այդ նա նվերներ պետք է տա նաև կարվածատիրոջ դավակներին: Յերբ կարվածատերը տուն է շինում, սպա ստիպում է դյուղացիներին ձրի աշխատել շինութեան վրա: Յեթե կարվածատերն իր սեփական տնտեսութեանն ունի, սպա դյուղացին տարեկան 20-30 որ պիտի աշխատի նրա տնտեսութեան մեջ:

Հողագործի դյուղացին, նույնիսկ այդ սարկական պայմաններով հեշտութեամբ չի կարողանում կարվածատիրոջից մի կտոր հող վերցնել կապալով: Իր յեկամուտն անբերիութեան կամ զորքերի սպառնաած ալիքմունքների դեպքերումն անգամ, յերբ դյուղացին (վարձակալը) վոչինչ չի բաննա սալուս Այդ նպատակով Ծա

վարձակալից պահանջում և գրավակառնի մուծումն կամ վարձավճարը նախորդ՝ մի տարի առաջ: Փողը պետք է մուծվի մեկ անգամից—պայամանագիրը կնքելիս: Այդպիսով գյուղացին ընկնում և յերկու լծի տակ—կալվածածառայող և վաշխառվի:

Կալվածատերն իր տիրապետութունը գյուղացիության վրա ապահովելու համար՝ կալմակերպում և գինված մարդկանց հատուկ ջոկատներ: Նա ստում և գյուղացիներին, վոր այդ արվում և ավաղակների հարձակումներից պաշտպանվելու նպատակով: Գյուղացիության վստահութունը գրավելու համար, այդ ջոկատներին տրվում և «ժողովրդական սպառազինումն» (մինտուան) հորջորջումը: Նրանք պահվում են տեղական գյուղացիության հաշվին: Նրանց պահելու համար հավաքվում և առանձին հարկ: Կալվածատերը նույնիսկ ստիպում և գյուղացիներին ծառայելու միտուանի մեջ: Ամբողջությամբ հողատիրոջ յենթարկված գյուղացին, համոզված լինելով անդամ, վոր այդ «գյուղացիական սպառազինումն» ուղղված և աշխատավորության դեմ, նորից ստիպված և ծառայելու նրա շարքերում: Գյուղացին այդ բանում համոզվում և կալվածատիրոջ հետ իր առաջին լուրջ ընդհարումից հետո:

Գյուղական այդ բաղմաթիվ ու բաղմադիտի հարկերից և տուրքերից հետո, այնքան քիչ և մնում, վոր նա չի կարողանում յուր զնալ մինչևիկ հաջորդ բերրը և ստիպված և լինում կամ քաղաք զնալու կողմնակի աշխատանքի և կամ վարձվելու վորպես բատրակ: Նույնիսկ շատ լավ բերքի ժամանակն անգամ գյուղացին հաղիվ և կարողանում ծայրը—ծայրին հասցնել: Նրա ամբողջ հողատիրոջ չից պատրաստած մի հատարակի զգեստ և,

վորը գիշերներն ել անկողնի տեղ և ծառայում: Նրա յենրեսաները ման են գալիս մերկ կամ ցնցոտիներ հագած: Նա կերակրվում և բանջարեղեններով, սունկով, կարտոֆիլով, ամենավատ տեսակի բրնձով, իսկ վատ տարիներին՝ մորեխանման միջատներ և վորսում և ծառերի կեղեվ և հավաքում, վորպեսզի մի վորևե բանով օղնի իր ստամոքսը: Յեթե անրերրիութուն պատահի՝ միևնույնն և, կալվածատերը պահանջում և վարձավճարը լիովին, իսկ յեթե գյուղացին չկարողանա վճարել, ապա կքչի՝ նրան և հողը կհանձնի ուրիշին: Գյուղացուն հողից քչելիս վորպեսզի կալվածատերն ստանա վարձավճարը, գրավում և վարձակալի ամբողջ գույքը:

Մի գյուղում վարձակալը հողատիրոջ պարտք մնաց 12 ո. այդ կալվածատերը պարտքը գանձելու համար՝ գյուղացու մոտ ուղարկեց 6 ծառա: Վարձակալը չկարողացավ վճարել և կալվածատիրոջ ծառաները տարան նրա կովը: Այդ ժամանակ վարձակալը փող փոխ վերցրեց վաշխատուից իր պարտքը տալու համար: Յերբ վարձակալը փողը հանձնեց հողատիրոջ, վերջինս հրաժարվեց կովը հետ տալուց: Նա 12 ուրբուրց բացի պահանջից 7 ո. 20 կ. ևս, վորպես կովը խելու որն իր ծառաների վրա արած ծախտի հատուցումն (մարդադուրս հաշված 20 կ.): Այսպիսով վարձակալը դատարկաձեռն հետ վերադարձավ: Յերրորդ որը վարձակալը նորից ներկայացավ հողատիրոջ և բերեց լրացուցիչ 1 ո. 20 կոպեկը: Բայց այս անգամ ել կալվածատերը հրաժարվեց կովը գյուղացուն տալուց, պահանջելով կովին կերակրելու համար որական 20 կոպեկ: Յերկար չարչարանքներից հետո վարձակալին հաջողվում և կովը հետ ստանալ: Եսկայն գրանով չեն վերջանում նրա տանջանքները:

Հաջորդ որը պարզվում է, վոր իր կապալով վերսրան հողամասն արդեն վարձավճարով տրված է մի ուրիշ գյուղացու:

Վ.Ա.ՐԶԱԿԱԼԸ ԴԱՌՆՈՒՄ Ե ՍՏՐՈՒԿ

Սովորաբար կալվածատերը պարտքի դիմաց գյուղացուց խլում է նրա ամբողջ անասուններն ու գյուղատընտեսական գործիքները: Կալվածատիրոջ գինված ջոկատները տանջելով՝ գյուղացիներին ստիպում են վճարել վարձավճարը: Յեթե դա չի ոգնում, այն ժամանակ կալվածատերը բանտ է նստեցնում վարձակալներին: Հարավային Չինաստանում, Գուանդուն նահանգում, կալվածատերերից շատերը վարձակալների համար պատրաստած բանտեր ունեն: Դաշտային աշխատանքների ժամանակ կալվածատերը բանտից հանում է վարձակալին: Յերբեմն կալվածատերերը պահում են ստիպողական աշխատանքի տներ, վորտեղ պետք է գտնվեն նրա բոլոր պարտապանները: Նրանք այնտեղից կարող են հեռանալ միայն իրենց պարտքն աշխատանքով հատուցելուց հետո: Այդպիսի պարտապանները նման են իսկահան ստրուկներին: Նրանք, իրենց տիրոջ հետ խոսելիս, նույնիսկ պետք է ծուկ չոքեն:

Գուանսի (նույնպես հարավային Չինաստան) նահանգի վորոշ վայրերում այսպիսի մի սովորութիւն կա՝ կալվածատերը պարտքի փոխարեն գյուղացուց վերցնում է վերջինիս աղջկան վորպես հարձ, և պահում է մինչև վհայրը փրկանք վճարի իր աղջկա համար:

Վորպեսզի գյուղացին հողից չգրկվի և սովամահ չլինի, ստիպված է ծախել իր և իր ընտանիքի անդամ-

ների վերջին չապիկը և նրանց ցուրտ յեղանակներին մերկ թողնելու: Բայց նույնիսկ այս դեպքում անլամ գյուղացին նորից չի կարողանում ծայրը-ծայրին հասնել: Այն ժամանակ նա դիմում է ամենածայրահեղ միջոցին՝ նա ծախում է իր կնոջն ու յերեխաներին, վորպեսզի պարտքերը վճարի: Ծատերը թողնում են իրենց տունն ու տեղը, դնում են քաղաք վարձվելու վորպես բանվոր:

Բայց քաղաքներում նրանց սպասում է դործադրութիւնը և շատ քչերին է հաջողվում ցածր վճարով աշխատանք ձեռք բերել: Մեծամասնութիւնն ստիպված է հաճախ վաճառվել վորպես ստրուկ, իմպերիալիստական յերկրներն ու դաղութները տարվելու համար կամ ավագակ դառնալու:

Գուանդուն նահանգի գյուղերից մեկում ստորում է կայ անունով մի կալվածատեր: Այդ կալվածատերն ստիպում է գյուղացիներին վարձավճարը ժամանակին տալ և գյուղացիներից մեկն ստիպված է լինում ծախելու իր վորդուն: Յերբ նա պատմեց կալվածատիրոջն այս մասին, վերջինս ժպտալով պատասխանեց. — «Դու աղնիվ մարդ ես: Գիտե՞ս արդյոք, վոր այդ վաճառքից կրկնակի ոգուտ ունիս: Ամենից առաջ դու վճարում ես պարտքդ: Յերկրորդ՝ վոր դու ապացուցում ես, վոր դու մի մարդ ես, վորին կարելի յե վստահանալ: Այժմ յանից յես քեզ թույլ եմ տալիս մշակել իմ հողը: Բացի այս բոլորից, դու ազատվեցիր ընտանիքիդ ալելորդ մի անդամից»:

Այսպիսի ձեպերով ծախված ստրուկների թիվը Չինաստանում հասնում է 3 միլիոնի: Այս հանգամանքն ստիպված են խոստովանել մեր այն թշնամիները, վորոնք այժմ վտանգ են բարձրացնում Ոորհրդային

Միութեան մեջ իբր թե դոյութեան ունեցող ճշարտագու-
կանն աշխատանքի մասին: Այսպիսի ստրուկներն իրենց
ամբողջ կյանքի ընթացքում իրավունք չունեն հեռանա-
լու իրենց տիրոջից: Վոչ միայն նրանք, այլ և նրանց
վորդիներն ու թոռներն ստիպված են ծառայելու այդ
տիրոջ մոտ, մինչեւ վոր վերջինս չծախի մեկ ուրիշի:

ՎԱՇԵԱՌՈՒՆ

Գյուղացին վորպեսզի մի քիչ թեթեւացնի իր ստրու-
կական կախումը կարվածատիրոջից, դիմում և վաշխա-
ռուին: Իայց շատ հաճախ վաշխառուն այն կարվածա-
տերն և, վորն արդեն իր վարձակալների կաշին յոթն ան-
գամ քերթել և: Գյուղացին վաշխառվից փոխ և վերցնում
կամ մի քանի ուրբի և կամ մի քանի փութ հացահատիկ:
Նա ստիպված և կարվածատեր-վաշխառվից աղաչելով
ստանալ հենց այն հացահատիկը, վորն ինքն և ցանել
ու հնձել: Յերբեմն ել նա դիմում և ուրիշ վաշխառվի՝
փող ստանալու համար և այդ փողով կարվածատիրո-
ջից դնում և հացահատիկ: Ինչքան ավելի աղքատ և
գյուղացին, այնքան ավելի մեծ տոկոս պիտի վճարի
վերցրած փոխառութեան համար, վորովհետեւ վաշխա-
ռուն ողբադրծում և նրա անելանելի դրութիւնը:

Գուանդուն նահանգի գավառներից մեկում ամեն մի
գյուղում կա մեկ յերկու կարվածատեր, վորոնց սրակա-
նում և մշակելի հողի չորս-հինգերորդական մասը:
Նրանք իրենց ձեռքում կենտրոնացրել են խոշոր հարքս-
տութիւն և կորիքավորներին փող կամ հացահատիկ
փոխ են տալիս վաշխառուական տոկոսներով: Այդպիսի
կարվածատեր-վաշխառուն նշանակում և իրեն համար
քանկայի տոկոսը: Յեւ յերբ գյուղացիներից մեկն ու

մեկը բրինձ չի ունենում իրեն ու իր ընտանիքը կերա-
կրիւս համար, ստորացած նրանից մի 2 ուրբի պարտք
և խնդրում, ապա նա, փոխանակ թշվառին ոգնելու,
ծաղրում և նրան և սկսում և նրա հետ մի յերկար խո-
սակցութիւն.— «Ինչ փող ես ուզում: Յես փող չունեմ:
Բայց սպասիր կնոջիցս հարցնեմ, թերևս նա ունենա:
Խնդրեմ, մի քիչ սպասիր»: Ստիպելով գյուղացուն մի
յերկու ժամ սպասել, նա նորից, առանց շտապելու—
դուքս և գալիս և ծիծաղելով հայտարարում և. «Բախ-
տավոր ես, կինս հենց մի քանի ուրբի ունի և խոստա-
ցավ քեզ փոխ տալու: Բայց կնոջից փող սպասող վերցնե-
լով, դու պետք և նրան վճարես 100 կիլոգրամ հացահա-
տիկ»: 100 կիլոգրամ հացահատիկն ամենաքիչն արժե
20 ու, այսինքն տասն անգամ ավելի, քան այն դումարը,
վոր փոխ վերցրեց, սակայն ստիպված և դրան ել համա-
ձայնելու:

2. ԻՆՉՊԵՍ Ե ԱՊՐՈՒՄ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՅՈՒՂԱՅԻՆ

Յերբ դեռ կարվածատերը գրապիւլ և հողի մի մասը,
թեկուղ և բալագույն ու մեծագույն մասը, ապա գյու-
ղացուն մնում և հողի վորոշ կտոր, վորը նրա սեփա-
կանութիւնն և կաղմում: Գյուղացին, վորն աշխատում
է սեփական հողի վրա, չպետք և վարձավճար տա: Նա,
բոտ յերկուցիցին, կախումն չունի կարվածատիրոջից:
Թերևս նա վարձակալից ավելի լավ և ապրում և աղքա-
տութիւնը նրան չի մղում դեպի վաշխառվի ճիրանները
և դեպի ստրկութիւն:

ՀԱՐԿԱՅԻՆ ԹԱՒԱՆ

Իր սեփական հողամասի վրա աշխատող գյուղա-
ցին, իսկապէս, չպետք և իր բերքը բաժանի կարվածա-

տիրոջ հետ: Բերքը հալածելու ժամանակ կալվածա-
տերը չի դալիս գյուղացու արտը վարձավճար ստանա-
լու համար: Սակայն կալվածատիրոջ փոխարեն դալիս
ե ուրիշ հյուր, վորն հայտարարում է, թե ինքը հարկա-
հալած է և դավառական վարչության կողմից յեկել է
հողային հարկը վերցնելու:


Հարկահատվաքը վստահացնում է գյուղացուն, վոր
պետութունը զանվում է շատ նեղ դրության մեջ և դրա
համար ել միջոցներ չունի մոտակա գետի ամբարտակը
նորոգելու: Իսկ յեթե ամբարտակները չվերանորոգվեն,
անխուսափելի յե հեղեղումը: Դրա համար ել հողային
հարկն ավելացրած է. նախկին 1 1/2 ուրլու փոխարեն
2 1/2 ուրլի պետք է վճարել յուրաքանչյուր մուշի հա-
մար: Մեկ մուն հեկտարի 1/16 մասն է և տալիս է մոտա-
վորապես տարեկան 80 կիլոգրամ ցորեն: Մի կիլոգրամը
կարելի յե ծախել 10-12 կոպեկով: Գյուղացին փող չու-
նի, դրա համար ել խնդրում է հարկահալաքից սպասել,
մինչեվ վոր հացը շուկա տանի ու ստացած փողերով
հարկը մուծի: Գյուղացին հաղիվ 20 մու (1 1/4 հեկտար)
հող ունի: Հյուսիսային Չինաստանում դա միջակ գյու-
ղացու ցանքի տարածության չափն է: Նրանից 50 ո.
հարկ են վերցնում: Դրա համար ել նա իր 1500
կիլոգրամ հացահատիկից 500 կիլ. շուկա յե տանում:
Դեռ ծախած հացահատիկի փողը չստացած, վրա յե
հասնում շուկայի վերահսկիչը և կիլոյին 3 կոպեկ առեվ-
տրական հարկ վերցնում: Գյուղացին վճարում է 15
ուրլի իր ստացած դումարից: Յեվ նա, վորպետքի լրելվ
վճարի հողային հարկը, ստիպված է նորից 150 կիլ.
հացահատիկ ծախել: Յերբ գյուղացին այդ ել է անում
և մուծում է իր բաժին հողային հարկը, պարզվում է,

վոր նա պետք է տա և ուրիշ բաղձալիսի տուրքեր ու
հարկեր: Գյուղացին տուն ունի, և այդ տունը նույնպես
յենթարկվում է հարկադրման: Գյուղացին պարարտաց-
նում է իր հողը, դա նշանակում է, վոր նա աղբի համար
ել պիտի տա: Հավատո՞ւմ է նա չար վոգիների գոյու-
թյան: Գյուղացին հիշում է իր հարկային դժբախտու-
թյունները և վորոշում է, վոր հիմք կա հավատալու
չար վոգիների գոյության: Այդ ժամանակ նրանից պետք
է դանձել սնահավատության հարկը: Հիվանդացել է և
նա յերբևիցից: Յեթե հիվանդացել է, ապա դեղեր է ըն-
դունել և դրա համար ել պետք է վճարել դեղ ընդունե-
լու հարկ:

Ընթերցողը կարող է մտածել, վոր այս բոլորը հե-
ղինակի հերյուրանքն է: Իսկապես, դեղ ընդունելու և
սնահավատության հարկեր—սա ավելի շուտ նման է
հեքյաթի: Սակայն այսպիսի «հեքյաթներ» Չինաստա-
նում չափազանց շատ կան, վորպետքի կարելի լինի դրել
մի փոքրիկ գրքույկի մեջ: Կան այնպիսի տեղեր, ուր
ժողովրդից վերցնում են 80 զանազան տեսակի հարկեր
և ամեն մի հարկին վորոշ անուն է կազմած: Հարկերի
մեծ մասն, իհարկե, ընկնում է գյուղացիության վրա:

Այս բոլոր հարկերը գոյություն ունեն, չհաշված
հողային հարկը, վորն հաղվադյուտ դեպքերում է մլայն
վոր տարեկան մի անգամ է դանձվում: Հաճախ հարկը
հավաքում են տարեկան յերեք, հինգ և նույնիսկ վեց
անգամ: Մի տարում հողային հարկը հավաքում են 5-6
տարվա համար նախորոք: Հաջորդ տարին նույնպես
հինգ տարվա համար: Չինաստանում վայրեր կան, ուր
հողային հարկը նախորոք հավաքված է տասնյակ տա-
րիների համար: Որինակ, Միչուան նահանգում 1951
թվակ. հողային հարկն արդեն դանձված է:

Յերբ հարկահալաքը վերջապես հեռանում է, ապա նրա գործը շարունակում է Գոմիղանյան բանակի սպան: Ամենից առաջ նրան փող է հարկավոր, իսկ յեթե գյուղացիներն փող չի կարող տալ, ապա կարելի չէ զիջել և բավականանալ 200-300 կիլոգրամ հացահատիկով: Գրանից բացի նրան հարկավոր են զրաստներ և սայլեր իր ջուկատի գույքը փոխադրելու համար: Յեթե զրաստ



Հեղեղումից վնասված գյուղացիական բնօճախի (Հյուսիսային Չինաստանում)

չճարվի, նա գյուղացուն իրեն է վերցնում վորպես բեռնակիր: Գյուղացին եման է պրծել, յեթե նրան հաջողվի տանը մնալ և իր բերքից 300-400 կլ. հացահատիկ պահել: Սակայն մինչև նոր բերքը նա չի կարող իր գոյությունը քաշ տալ և ստիպված է գլխակալու նույն միջոցներ

րին, վորոնց գլխում են կալվածատիրոջ հողի վրա աչքառող կապալառուները:

Մի յերկու շաբաթ չանցած, յերբ մոտակա գետի ջուրն սկսում է բարձրանալ, պարզվում է, վոր ամբարտակն այդպես էլ չնորոգված մնացել է, չնայած այն բանին, վոր փողերը հավաքել են: Ջուրը հորդում և վարարում է և ծածկում հարյուրավոր ու հազարավոր գյուղեր: Յեթե գյուղացին կարողանում է մի կերպ ապաստվել, ապա նա դառնում է միանդամայն աղքատանից, հաղուստից և ուտելիղենից զրկված:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՅԲԱՅՈՒՄՆ ՈՒ ՍՈՎԸ

Իրենց սեփական հողը մշակող գյուղացիներ ավելի շատ կան Հյուսիսային Չինաստանում, և չնայած այն բանին, վոր նրանք մեծ մասամբ կախումն չունեն կալվածատիրոջից, սովը հատկապես մեծ ավերածույցներ է կատարում Հյուսիսային Չինաստանում:

1927 թվին Չինաստանում 9 միլիոն սովյալներ կային, 1928 թվին— 37 միլիոն, 1929 թվին— 57 միլիոն, 1930 թ.— 71 միլիոն: Այդ սովյալների մեծ մասը զրանվում է Հյուսիսային Չինաստանում: Այդ չորս տարվա ընթացքում Հյուսիսային նահանգներում սովից մեռել են մոտ 10 միլիոն մարդ: Գյուղեր կան, ուր մի քանի հարյուր ընտանիքներից կենդանի յին մնացել 10-15 ընտանիք: Սովը վորոշ տեղերում (որինակ՝ Շենսի և Գանսու նահանգներում) մարդկանց հասցրել է ժարդակերության: Ոտարերկրյա թերթերը հաղորդում են, վոր Գանսու նահանգում յերեխայից չեն զամբարձակվում

դուրս գալ տներին, վախենալով, վոր իրենց կուտեն: Եկնսի նահանգի մի քանի գավառներում բնակչությունն սպանում և ուտում և յեկվորներին: Մարդակ բուժյան համար ձերբակալածները խոստովանում են իրենց արածը և խնդրում, վոր իրենց սպանեն վորպեսզի տանջանքից ազատվեն:

Նույն Եկնսի նահանգի գավառներից մեկում կաղճակերպված են «գերեզմանափորների ջոկատներ»: Այդ ջոկատներն զբաղված են սովից մահացածների դիակները թաղելով: Այդ դիակներով ծածկված են այն ճանապարհները, վորով սովյալները փախչում են դեպի համեմատաբար ավելի աղահով շրջաններ: «Գերեզմանափորների ջոկատները» իրենց հաղորդագրությունների մեջ հայտնում են, վոր նրանք դիակները դանում են մեծ մասամբ կիսով չափ կերված: Նրանց վտարեն ու մարմնի փափուկ մասերը կտրված են և կերակուր են ծառայել սովյալների համար:

Չինական թերթերը գրում են, վոր «յերեսաներին ուտելը և դիակներով կերակրվելը սովորական յերեվոյթ և դառել»:

Հյուսիսային Չինաստանում սովից փրկվելու համար գյուղացիներն ստրկանում են վաշխառուներին և չնչին գներով ծախում են իրենց հողն ու գյուղատնտեսական գործիքները: Եկնսի նահանգում մի մու (հեկտարի 1/16 մասը) հողն առաջ արժեք մոտավորապես 100 ուտրլի: Հիմա սովյալ գյուղացիները մի մու հողը ծախում են 10,3 և նույնիսկ մի ուտրլով:

Գուսթանը, վորի ձեռք բերելու համար գյուղացին 10 ուտրլուց ավել և ծախսել, այժմ ծախվում և 2-3 ուտրլով նույնը կաատարվում և նաև մյուս գյուղատնտե-

սական գործիքների վերաբերմամբ—փողիների, թոխարների և մանգաղների: Քանզվում և վորպես վառելափայտ ծախվում են նույնիսկ գյուղացիական տները: Սակայն գյուղացիական տնտեսության քայքայումը սրանով չի վերջանում: Վաճառքի յեն հանվում վոչ միայն հողն ու աշխատանքի գործիքներն, այլ նաև իրենք աշխատավորները: Այսպես, որինակ, չինական

1008
36606



Սովյալներ


մի թերթում մենք կարդում ենք, վոր «Եկնսի նահանգի քաղաքների փողոցներում աղջիկները ծախվում են իրեն ստրուկ մի կտոր հացով»: Մի ուրիշ թերթում հաղորդում են, վոր Սինսան նահանգից փախչող սովյալները ճանապարհին մարդկային շուկա յեն սարքել, ուր ծնող-

ները բարձրագույն գնողներ կանչելով ծախսիւմ են
իրենց զավակներին: Յերեք տարեկան աղջիկը ծախում
են մեկ ուրբով, 5 տարեկան աղան՝ 2 ուրբով:

Վերջին տարվա ընթացքում, Չինաստանի հյուսիս-
այսին շրջանի Շենսի նահանգում, ուր այժմ բնակչու-
թյան կեսն է մնացել, իսկ մյուս կեսը կամ սովամահ է
յեղել և կամ փախել մյուս նահանգները, մի տարում
վերպես սորուկ վաճառվել են 400 000 մարդ: Չի-
նական իշխանութուններն այստեղ ևս ձեռքից չեն բաց
թողել հարստանալու հնարավորութունը: Յուրաքան-
չյուր առևտրական շրջանառութուն պետք է հարկա-
դրման յենթարկվի: Դրա համար ել ստրկավաճառու-
թյան վրա ևս հարկ դրին և յուրաքանչյուր վաճառված
սորուկի համար գնողից դանձեցին 10 ուրբով: Այդ
նահանգում մարդը ծախվում էր 3-4 ուրբով, այնպես
վոր նման հարկի պայմաններում ստրկավաճառութուն-
նից ստացված վաստակի առյուծի պատանն ընկնում էր
չինական պաշտոնյաների և գեներալների գրպանը,
վորոնց դրա համար իրավամբ պետք է իսկական սորը-
կավաճառներ համարել: Յին-Յու-Սյան և Յեն-Սի-Շան
գեներալներն ստրկավաճառումից յուրաքանչյուրը
յերկու միլիոն ուրբի գրպանեց:

**ԻՆՉՊԵՍ ԵՆ ՀԱՐՍՏԱՆՈՒՄ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐՆ ՈՒ ԶԻՆ-
ՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Չինական գեներալները հարյուր հազարավոր գոր-
քերի գլուխ են կանգնած: Նրանք անընդհատ կռվում են
միմյանց հետ, նպատակ ունենալով դավթելու յերկրի
ավելի հարուստ մասերը, վարպետի հնարավորութուն
ունենան ավելի մեծ թվով գյուղացիներ թալանելու:
Վաչ վոք վորոչաիկ չգիտի, թե ինչքան զորք կա Չի-



Սովյակները ծախում են իրենց տները վարպես վառելյա
փայտ (Շենսի նահանգում)

նաստանում: Բայց նրանց քանակը շատ միլիոնների չե հասնում: Այդ բոլոր զինվորներն ու սպաները կերտկըր-
փում են գյուղացիութան հաշվին: Յեզլ յեթե կալվա-
ծատերն այնքան է թալանել վարձակալին, վոր վերջինս
այլևս վոչինչ չունի վճարելու, ապա գեներալները դար-
չապարն իր ամբողջ ծանրությամբ ճնշում է սեփական
հողամաս ունեցող գյուղացիությանը:

Չինական միլիտարիստները բանակները կոտկրում
և հողին են հավասարեցնում գյուղացիական ցանքերը:
Ռազմի վայրերի դաշտերն անապատի յեն վերածվում:
Քանդելով գետերի ամբարտակները, միլիտարիստները
հեղեղում են գյուղացիութան դաշտերն ու բնակարան-
ները: 1930 թ. Չան-Կայ-Շիի և Հյուսիսային միլիտա-
րիստների կովի ժամանակ պատերազմական դործա-
դություններից առեժեց միայն Նենան նահանգի բնակ-
չության վոչ պակաս քան յերրորդ մասը: Սովյաներին
ողջող կոմիտեն հետադռեց այս նահանգը՝ պարզելու
պատերազմի պատճառած վնասները: Պարզվեց, վոր
առեժամ գյուղացիութան կեսի դուրքն ու փողը—50
միլիոն ռուբլու գումարով— բռնադրավված է: Ավելի
քան 10 միլիոն մարդ քայքայված է ամբողջությամբ և
թողնված է առանց բնակարանի ու կերակրի: Գեներալ-
ները վոչ միայն կերակրվում են և կերակրում իրենց
զորքը գյուղացիութան հաշվին, այլև ահադին հարըս-
տություններ են դիզում:

Չորս տարի սրանից առաջ Գոմինդանյան բանակի
կազմն անցած մի բանակի հրամանատարի մոտ այդ ձե-
վով թալանված 10 միլիոն ռուբլի կար: Չինական հայտ-
նի գեներալ, բանվորութան դահլճ Սուն-Չուան-Սյան,
Շանհայից, վորտեղից նրան քչեցին ապտոտմբած բան-
վորները, Տյանցզին փոխադրեց ՉԱ միլիոն ռուբլի:

Քնդհանրապես չինական խոշոր գեներալները հնարա-
փորություն ունեն տարեկան 5-10 միլիոն ռուբլի դի-
զել:

Նույն բանն անում են նաև պաշտոնյաները: Գյուղա-
ցիներից թալանված գումարի միայն մի մասն է պետա-
հան գանձարկղը մտնում: Մեծ մասը զրպանում է այն
պաշտոնյան, վորի ձեռքով անցնում են այդ գումար-
ները: Հյուսիսային Չինաստանի Ներքն նահանգի կառա-
վարիչներից մեկն իր պաշտոնավարության առաջին
կիսամյակի ընթացքում այդ ճանտպարհով 10 միլիոն
ռուբլի դիզեց: Յուրան նահանգի կառավարիչն արտա-
ստճմանյան բանկում պահած ուներ 20 միլիոն ռուբլի,
Քորը նույնպես այդ ճանապարհով եր ձեռք բերվել:

1928 թվին սպանված հայտնի գեներալ՝ ավազակ
Չժան Յզու-Լինը, վորն զավթել էր Մանջուրիան, ու-
ներ վոչ պակաս քան հարյուր միլիոն ռուբլի— նույն-
պես ձեռք բերված նման միլիոններով: Այդ փողերը ժա-
ռանդեց նրա վորդին՝ Չժան-Սյու-Լյանը, 1929 թվին
ԽՍՀՄ վրա կատարած ավազակային հարձակման գըր-
խավոր «հերոսներից» մեկը:

Չինաստանի Հյուսիսային մի քանի նահանգների
տիրակալ և Հյուսիսային միլիտարիստների Չան-Կայ-
Շիի ղեմ մղած կովի զլխավոր մասնակից Յեն-Սի-
Շանը իր տիրապետության ժամանակամիջոցում 700-
800 միլիոն ռուբլի զանազան տեսակի գուրք «ձեռք բե-
րեց»: Նա ի միջի այլոց, քիչ «չչահեց» թղթե դրամ
սպելով: Նրա թղթե դրամները բաց էին թողնվում
հոկայական քանակությամբ և հետո անվալեր հայտա-
բացվում: Այս ձևով իրենց համար հարստություն են
դիզում և շատ ուրիշ գեներալներ ու պաշտոնյաներ:

Գյուղացիներից հարկի ու տուրքի միջոցով թալան-

ված փողերը գործ են անում ե՛լ ավելի շահագործելու աշխատավորութեանը և հարստացնելու իշխող դասակարգերին: Այդ փողերով զենեղաներն ու պաշտոնյաները շատ չնչին գներով քայքայված գյուղացիներին, գնում են հողերը և հետո այդ նույն հողը կադաւրով տալիս են այդ նույն գյուղացիներին, ստանալով շատ բարձր վարձավճար. այսպիսով նրանք բաղձապատկում են իրենց յեկամուտը: Այդ փողերով նրանք ոտաբերկրահիներն զենք են գնում և վարձում են նոր զինվորներ, ավելացնում և ուժեղացնում են իրենց բանակը, վորպեսզի գյուղացուց ավելի մեծ ուժով յեկամուտ դուրս կորզեն: Նրանք այդ փողերը տալիս են վաճառուներին և իրենք ել վաճառուներ են հանդիսանում:

ԱՓԻՈՆ (ՈՊԻՈՒՄ)

Ափիոնի գործածութեանը շատ և տարածված Չինաստանում: Այս թույնն ավելի կործանիչ է, քան ալկոհոլը:

Ափիոնի առևտուրից հարստանում են պաշտոնյաները, զինվորականութեանը և վաճառականները: Վաճառականները գյուղացիներից ափիոն գնում են ֆունտը 8-10 ռուբլով, և այդ նույն ափիոնը ծախում են ֆունտը 80-100 ռուբլով: Այսպիսի խոշոր ողուտի պատճառով ափիոնի առևտուրով զբաղվում են վոչ միայն վաճառականները, այլ և պաշտոնեյութեանը, զինվորականութեանն ու կալվածատերերը: Նրանք չեն բավականանում միայն ափիոնի սպեկուլացիայով: Չինաստանում մինչև այժմ խաչաչաչ ցանկն արգելված էր (վորից ափիոն են պատրաստում): Այս արգելքի խախտման համար սահմանված էյին խոշոր տուգանքներ: Պաշտոնյաները, վորոնք մեծ մասամբ ափիոնի առև-

տարով են պարտպում, ազատում են այս արգելքից և առաջանելով խաչաչ ցանողներին՝ բաղձապատկում են իրենց յեկամուտները: Բացի սրանից, նրանք խաչաչ ցանելու և ափիոնի առևտուրի վրա առանձին հարկ են սահմանել, վորի մեծ մասը նույնպես պաշտոնյայի կամ գեներալի դրականն է մտնում: Շատ տեղերում գոմինգանյան զինվորականութեանը վոչ մի արգելք հաշվի չառնելով, զոռով ստիպում է գյուղացիներին խաչաչ ցանել: Չհնազանդվող գյուղացիներին զնդակահարում են:

Մի չին զիտնական հաշվել է, վոր Չինաստանում քաղաքական արտադրվում է 1200 տոնն ափիոն և տեղական պաշտոնեյութեանը միայն ափիոնի առևտուրից տարեկան 50-100 միլիոն ռուբլի յե վաստակում:

Այսպիսով կալվածատերերը, վաճառականները և ուրիշ շահագործողներն ամեն ինչ անում են, վորպեսզի ժողովրդական մասսաների դիտութեանը թունավորեն ափիոնով և այդ ճանապարհով թուլացնեն նրանց հեղափոխական վրդովմունքը: Ափիոնի վրա դրված արգելքը միայն նրա համար է, վոր ե՛լ ավելի շահագործվեն գյուղացիները:

3. ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՆ ՈՒ ՉԻՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

Չինական ժողովրդին ափիոնով թունավորելու ճճառայութեան պատիվը՝ միայն չինական իշխող դասակարգին չի պատկանում: Առաջ Չինաստանում ափիոն չէր արտադրվում: Ափիոնը ներմուծում էյին արաստահմանից և յերբ պարզվեց ափիոն գործածելու մեծ վնասը, ապա արգելվեց նրա ներմուծումը: Բայց անց-


յալ դարի կեսերին անդլիական իմպերիալիստներն ափիոնի աղառ սուլտուր ձեռք բերելու համար պատերազմ հայտարարեցին Չինաստանին: Նրանք հաղթեցին այդ պատերազմում և այդ ժամանակվանից սկսեցին մեծ քանակութամբ ափիոն ներմուծել Չինաստան: Միայն դրանից հետո Չինաստանում սկսեցին խաչկառ ջանել: Չինաստան ափիոն ներմուծելով մինչև այժմ ոտարերկրյա կապիտալիստները խոշոր գումարներ են վաստակում:

Բայց սա միայն իմպերիալիզմի առաջին քաջագործութուններն են Չինաստանում: Այժմ Չինաստանի աշխատավորութանը, հատկապես դյուղացիութանը, ճնշելու և շահագործելու համար իմպերիալիստները գառնազան ուրիշ ձևեր են կիրառում: Նրանք գեներալներին միշտ լարում են միմյանց դեմ: Նրանց համար շահավետ է, վոր Չինաստանը բաժանված է թշնամի բանակների միջև: Մի շարք պետութունների իմպերիալիստները ոժանդակում են չինական գեներալների մի խմբավորման, իսկ ուրիշ յերկրների իմպերիալիստներն էլ ոժանդակում են չինական գեներալների այլ խմբավորման, վորպեսզի նրանք միշտ միմյանց դեմ կռվեն և լավագույն յերկրամասերը գրավեն իմպերիալիստները շահագործման համար ու ճնշեն աշխատավորութան հեղափոխական շարժումը:

Բացի դրանից ոտարերկրյա իմպերիալիստներն իրենք էլ մեծ յեկամուտներ են ստանում չինական դյուղացիներից թալանված հարստութունից: Նրանք մեծ տոկոսներ են ստանում չինական կառավարութան և վաշխառուներին քայ թողած փոխառութան համար: Նրանք Չինաստանից շատ եժան գներով արտահանում են՝ մետաքս, թեյ, բակլա և առասպելական դու-

մարներ են շահում այս առևտուրից: Իսկ Չինաստան են բերում իրենց ապրանքների ամենավատ տեսակներն ու խոշոր գումարներ շահում: Նրանք միշտ բարձրացնում են նավթի և դործվածքների գները: Նրանք գավթել են յերկաթուղիները, Փարբիկաները, դործարանները և հանքերը: Այս բալբը նրանք պաշտպանում են չինական հեղափոխական աշխատավորութանից իրենց ախանահիրներով, թնդանոթներով, բանակներով, բանտերով և Գոմինդանյան վոստիկանութամբ:

Կապիտալիստական յերկրներն ընդգրկած տնտեսական կրիզիսն անցել է նաև Չինաստան: Վորպես հետևյալնք 1929 թ. բորբքքված համաշխարհային տնտեսական ճգնաժամի, անդի յե ունեցել չինական արտահանութան դիսավոր ապրանքների (թեյ, մետաքս, բակլա) գների սուր անկումն: 1930 թի յերկրներն չինական մետաքսը ծախվում եր յերկու անգամ աժան, քան 1929 թ. սկզբում: Այդ ժամանակամիջոցում բակլայի գինն ընկել է ավելի քան յերեք անգամ: Բակլա ցանոդ, թեյ մշակող և մետաքսագործ դյուղացիները շատ չքնջին գներով են ծախում իրենց բերքի ճնացորդը: Նրանց բերքը գնող վաճառականները ցանկանում են այնպիսի շահ ստանալ, ինչպիսին առաջ եյին ստանում: Գյուղացիութան համար ամենից ավելի դժար յե վերոհիշյալ ապրանքների գների անկումը: Մյուս կողմից արտասահմանյան կապիտալիստները ձգտում են խոշոր գումար գրդանել Չինաստան ներմուծած իրենց ապրանքները: Այս ձևով նրանք ցանկանում են տնտեսական ճգնաժամի ժամանակ իրենց կորցրածը հետ վերադարձնել: Նրանք իրենց ձեռքումն են կենտրոնացրել Չինաստանում ամենաշատ սպառվող արդյունաբերական ապրանքների (նավթ, դործվածքներ) հայթայթումը և որ



«Կարսի Տեգեր» (Խեմանն նահանգ)

ըստ որև ավերացնում են այդ ապրանքների գները: Այսպիսով իր աշխատանքի արդյունքն հանդիսացող ապրանքը շատ եժան ծախելով, գյուղացին ստիպված է իր ուժերից վեր բարձր գներով գնելու իրեն անհրաժեշտ քաղաքային ապրանքները:

4. ՀՈՂԻ ՅԵՎ ՀԱՅԻ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԸ

Մինչև ծայր աստիճանի աղքատության, սովի և հուսահատության հասցրված չինական գյուղացին դիմում է գների ուժին: Յեթե հրացան չունի, ապա վերցնում է դանակ, նիզակ (տեգ), մանգաղ: Գալառ-դավառի հետևից ապստամբում են չինական գյուղացիները: Արդեն գյուղացիության մեկ հինգերորդ մասը գները ձեռքին բարձրացել է պայքարելու բնույթով իր կալվածատերի ու վաճառուների, ընդդեմ Գոմինդանյան իշխանության և արտասահմանյան իմպերիալիստների դեմ-- հանուն խորհուրդների իշխանության:

«ԳԱՂՏՆԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՊԱՅՔԱՐԸ

Խորհրդային իշխանության համար պայքարելու ընթացքը բռնելուց առաջ, չինական գյուղացիությունն ստիպված յեղավ իր շահագործողներին դեմ անհաջող պոռթկումների, խռովությունների, ապստամբությունների մի յերկար ուղի անցնել:

Մինչ այդ Չինաստանում (19-րդ դարի վերջը, 20-րդ դարի սկիզբը) աճեց արդյունաբերությունը և դարպացավ բանվոր դասակարգը: Վերջինս անցնում է գյուղացիական շարժման գլուխը և այս հանդամանքը ապահովում է հաղթանակի կարևորագույն նախապայմաններից մեկը: Բանվոր դասակարգի կողմից ղեկավարված

գյուղացիական ապստամբութիւնը Զինատանի մի շարք շրջաններում ստեղծել է խորհուրդների իշխանութիւն:

Բանվոր դասակարգին և նրա կուսակցութեանը չհասնող վեց միանգամից իր ձեռքում կենտրոնացնել գյուղացիութեան ղեկավարութիւնը և պայքարի դուրս հանել նրան բանվորագյուղացիական իշխանութեան համար: Իրա համար հարկավոր ել, վոր ինքը գյուղացիութեանը, իր հեղափոխական շարժման փորձով անցնէր քաղաքական դաստիարակութեան մեծ դպրոցը:

Ինչ ամբողջ գյուղացիութեանը չի անցել այդ քաղաքական դաստիարակութեանը, վոր նա կարող է հաղթանակել միայն բանվոր դասակարգի ղեկավարութեամբ խորհրդային իշխանութեան համար մղվող պայքարում:

Այն շրջաններում, ուր գյուղացիները դեռ չեն պայքարում Կոմկուսի դրոշի ներքո, գյուղացիական ապստամբական շարժումները խորհրդային իշխանութեան ցտեղծելու լուրջագոյ չեն առաջնորդվում, այլ միայն ուղղված են ընդդէմ անկուշտ պաշտոնյաների, ծանր հարկերի և միլիտարիստական բանակների թալանի:

Շանդուն նահանգում, 1930 թվի աշնանը, Սան-Փու Տզյուն և Յեն Սի-Շան գեներալների մեջ պատերազմ տեղի ունեցավ: Այդ պատերազմը գյուղացիութեանը հիմնովին քայքայեց: Յերկու կողմերի զորքերի թալանն ու բնակչութեան շահագործումը գյուղացիութեան մեջ սուղ բերեց մեծ վրդովմունք և ստիպեց նրան միլիտարիստական պատերազմների դեմ վճռական պայքարի դուրս գալ: «Կարմիր տեղերի» ջոկատներում կազմակերպված՝ նրանք հարձակում ելին դրոժում զինվորա-

կան մասերի վրա, ցանդում ելին յերկաթուղային կայարանները, խանդարում զորքերի տեղափոխութեանը և կոտորում շատ զինվորների ու սպաների: Ահա ինչ է գրում «Կարմիր Իրոյ» (Զինական Կոմկուսի որդած) թերթն այդ շարժման մասին. —

«Կարմիր Տեղեր» — դա մի կազմակերպութիւն է, վորը միացնում է գյուղացիութեանն ամենանորոջ լազուններով: Նրա ղեկավարները շատ դեպքերում հարուստ գյուղացիներ են (կուլակներ), սուլխառ, ջինարի (գյուղապետներ, վորոնք մեծ մասամբ կալվածատերեր են): Իրա համար էլ նրանք հաճախ դալաճանում են իրենց իսկ կազմակերպած մասսաներին և վաճառվում են մի վորեւէ միլիտարիստի, վորպէսզի զսրծեն մի ուրիշի դեմ, իսկ լայն մասսաներն այդ հարցերում ձայնի իրավունք չունեն: «Կարմիր Տեղերը» հանդիսանում են գյուղացիական մասսաների նախնական կազմակերպութիւնը և նրանց սնահալաասութեանն ու հետամնացութեանը լայն կերպով ոգտադործում են միլիտարիստները: Իրա հիմնական պատճառը պրոլետարական ղեկավարութեան բացակայութեանն է: Պրոլետարական կուսակցութեան հերթական խնդիրն է ավելի խորը թախանցել այդ կազմակերպութիւնների մեջ և վճռականորեն դուրս գալ ազրաբային հեղափոխութեան, խորհուրդների իշխանութեան, կարմիր բանակի կազմակերպման համար, ընդդէմ միլիտարիստների ու կուլակների. հեռացնել հետադիմական ղեկավարներին իրենց հետադիմական լուրջներին հետ միասին և ստիպել, վոր այդ կազմակերպութիւնները մասնակցեն կարմիր բանակի մղած պայքարին»:

Ինչպե՞ս կարող եր պատահել, վոր այդ դադանի ընկերութեանների, ինչպիսին է «Կարմիր Տեղերը».

գեկավարութիւնն ընկնի գյուղացիութեան Քչնամիների ձեռքը :

